# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<12>> դեկտեմբերի 2012թ. N 559 - Ա

ք. Արմավիր

### <<ՊՏՂՈՒՆՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի վեցերորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2012 թվականի դեկտեմբերի 10-ի զեկուցագիրը և Վերոնիկա Լոքյանի 2012 թվականի դեկտեմբերի 12-ի համաձայնությունը.

**ո ր ո շ ու մ եմ՝**

1. <<Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել Վերոնիկա Լոքյանին՝ մինչև թափուր պաշտոն առաջանալու հիմքի վերացումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

**ԶԵԿՈՒՑԱԳԻՐ**

Հարգելի պարոն Ղահրամանյան

Տեղեկացնում եմ Ձեզ, որ լրացել է ՀՀ Արմավիրի մարզի <<Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սիլվա Մկրտումյանի հետ կնքած աշխատանքային պայմանագրի ժամկետը:

Առաջարկում եմ <<Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել դպրոցի ուսուցչուհի Վերոնիկա Լոքյանին՝ մինչև սահմանված կարգով մրցույթի անցկացնելը:

Մարզպետարանի աշխատակազմի
կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ՝ Գ. Սայադյան

10.12.2012թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112/11027-12
«10» 12 2012